

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/3

6 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց <Վահանլի> ՍՊԸ դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատի ՏՀՏ 17.10.2012թ. թիվ 1102221 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ <Վահանլի> ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 09.10.2012թ. թիվ 1102221 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Վահանլի> ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 17.10.2012թ-ին կազմվել է թիվ 1102221 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

31.10.2012թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե մուտքագրվել է <Վահանլի> ՍՊԸ դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատի ՏՀՏ 17.10.2012թ. թիվ 1102221 ստուգման ակտն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ:

Իր հերթին, 30.10.2012թ-ին ՀՀ վարչական դատարանում (Վեդու նստավայր) մուտքագրվել է <Վահանլի> ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատի ՏՀՏ՝ 17.10.2012թ. կազմված թիվ 1102221 ստուգման ակտն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի կողմից 30.10.2012թ-ին կայացվել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին թիվ ՎԴ3/0321/05/12 որոշումը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի <դ> կետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ>:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. <Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի <դ> կետի և 70-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, <Վահանլի> ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

<Վահանլի> ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ